



## ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ե. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ

### ՄՄԲԵՐԴԱՇՈՐԻ ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐՀԵՍԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

աղար ինը հարյուր քսաներկու թվականի սեպտեմբերի 20-ից մինչև հոկտեմբերի 1-ը ներառյալ էջմիածնից մի գիտարշավ ձեռնարկվեց դեպի Ամբերդի Հովիտը՝ նրա հնություններն ուսումնասիրելու և վիճական արձանագրական մնացորդներն ստուգելու և գրի առնելու նպատակով։ Արշավախմբին անդամակցում էին ճարտարապետ Թորոս Թորամանյանը, Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը (Հետագայում Կիլիկիո կաթողիկոս), Սենեքերիմ Տեր-Հակոբյանը, նկարիչ Տարագրոսը և երգանդ Տեր-Մինասյանը (արշավախմբի ղեկավար)։

Դժբախտաբար, իր ժամանակին հնարավոր շեղավ գիտական արշավանքի արդյունքներն ամփոփել և հրատարակել, որովհետև ընկերներից մի քանիսը, գիտարշավից վիրագառնալուց անմիջապես հիտո, այլ աշխատանքի անցան, նոր պաշտոններով հեռացան էջմիածնից, իրենց հետ տանելով իրենց նշագրումները և այլ անհրաժեշտ նյութերը։ Մեզ մոտ մնաց մի ընդհանուր տեսրակ՝ արշավախմբի օրագիրը, որը համառու կերպով կազմում էինք մենք՝ հիտադայում այն ընդարձակելու և հրատարակելու նպատակով։ Մասիտով գրված այդ տեսրակը ներկայում շատ հնացած է, ուստի և այն վերջնական կորստից փրկելու համար, այս ըոդվածում վիրարտադրում ենք նրա հիմ-

նական բովանդակությունը և տալիս ենք ընթերցված արձանագրությունները իրենց ընթերցման հաջորդականությամբ։ Պետք է սկզբից և եթ ասենք, որ ընդհանուր գիտողություններն ու նկարագրությունները գրի են առնված տեղնուտեղը արշավախմբին մասնակցող ընկերներին միատեղ լսելուց հետո, հաճախ նրանց իսկ բառերով, իսկ վիմական արձանագրությունների ընթերցումը մասամբ պատկանում է միայն մեզ, բայց մեծ մասամբ՝ մեզ և Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանին միասին։ Բոլոր չափագրությունները մնացել են Թորոս Թորամանյանի մոտ։

Սեպտեմբերի 20, շուրջաբերի Արշավախմամբ նախ կանգ առավ Օշականում՝ զիտելու համար այնտեղ գտնված կոթողը։ Դա Զվարթնոցի խոյակների նման խոյակով մի սյուն է, ութ անհավասար կողերով, ներքեվում՝ երեք աստիճան մի խորանարդ պատվանդանով։ Խոյակը տարված է Օշականից և ներկայում գտնվում է էջմիածնի թանգարանում։ Պատվանդանի բարձրությունն է 0,92 մ., իսկ լայնությունը՝ միջին մասը 1,10 մ.։ Սյունի ներքին խարսխի լայնությունը 0,66 մ. է, բարձրությունը 0,24 մ., սյունը միակտուր քար է՝ 3,72 մ. բարձրությամբ։ Նրա լայն կողերը 0,33 մ. են, իսկ անկյունների կողերը՝ 0,22 մ.։

Տեղեկություն ստանալով, որ Օշականի մերձակա շրջանում մեկ-երկու կիլոմետր

Հեռավորության վրա նախապատմական գերեզմաններ են գտնվում, որոնք տեղացիների կողմից «Օղուզի գերեզմաններ» են կոչվում, որոշեցինք օգտվել Օշականի առաջիկա տոնից (հոկտեմբերի Կեսերին), մեկ օրով գալ Օշական՝ գերեզմաններն ուսումնասիրելու:

Սեպտեմբերի 21, հինգշաբթի: Մանրամասն դիտեցինք Բյուրականի եկեղեցին, որը մի շատ նշանավոր երևուցի է, ոչ կը ուր արսի գով, ի հաստատություն Թ. Թորամանյանի հայտնած մի կարծիքի: Այստեղից անցանք դեպի Վանքածոր կամ Ջրվշտիկ (տեղացիք անվանում են Ճլպստի ձոր), դիտե-

շատ հին գերեզմանաքար, որ հավանորեն վերկից գլորված է ներքեւ: Չորի բերանին, աջ կողմը, վանքից դեպի արևելք, երևում են վանքի հին պարսպի հետքերը: Վերևում հիշված խաչքարի առաջ կա օրորոցած մի գերեզմանաքար, տրամագիծը 0,42 մ., երկարությունը 1,63 մ.: Խաչքարը մի պարզ ելնդավոր, ազնիվ գծերով հուշարձան է, թեւվերի ծայրերը կրկնակի եռատերեւ ելնդավոր: Խաչի հորիզոնական թևերի վերին անկյունների վրա կախված են մի-մի խաղողի տերեւ: Խարսխից դուրս են գալիս երկու արմավենիներ, որոնք ցողուններով կապված



ԱՄԲԵՐԴԻ ԱՄՐՈՑԻ ՊԱՐԻՍՊՆԵՐԻ ՅՈՒՐԳԵՐԸ

ցինք այնտեղի եկեղեցին և զանգակատունը, ձորի այն կողմի խաչքարը (գետակի ձախ ափին), որը գուցե ժողով դործ է, համենայն զեպս ժողով դարից ոչ առաջ: Նույն ձորի ձախակողման ափին, վանքից և խաչքարից մի քիչ դեպի ներքեւ, գտնվում է մի մեծ այր, որի դուռն ու լուսամուտը հայտնի երևում են, դժբախտաբար՝ մուտքը լցված է և հնար չեղավ ներս մտնել, լուսամուտը կոնաձև է և փորված է ժայռի մեջ: Այրից ներքի, զարձյալ գետակի ձախ ափին, կա մի

են իրար հետ խաչի ստորին մասում: Դրա տակը մի ելնդավոր բոլորակով վարդյակ, որի մեջ 12 ճառագայթներով զարդ: Խաչի գլխին՝ բեկված կամար. դրանից ավելի բարձր, տարբեր բարի վրա կիսաբոլոր քարի բերք խաչի ճակատաբար, երեսին փորագրված քառանկյունի շրջանակ, մեջը զույգ խաչ, խաչերի ներսի իրար մոտեցող թևերի մոտ՝ 2 բոլորակ փոքրիկ վարդյակ: Այդ քառանկյունի շրջանակի վերևում՝ կիսաբոլորակ ելնդավոր փոքրիկ կամար, մեջը կետ խաչ, որի հորիզոնականը կանոնավոր է, իսկ ուղղահայացը առանց ծայրերի թեքվածների: Խաչքարն ամրացված է բարձր պատվանդանի վրա, իսկ բոլորը միասին փակված

<sup>1</sup> Հմմտ, Հ. Դ. Ալիշան, «Ալյուրատ», Վենետիկ, 1890, էջ 158, որտեղ հիշվում է, որ այս վայրից հին անոնքը եղել է Արդարականի կամ Արտավազիկ:

մատուածե քառանկյունի պատերով. կողքերը երեսից օրնամենտական կարնիզով. վերին ճակատը և նայողի ձախ կողմի կարնիզն ըսկա-կա են: Խաչքարի կամբոջին կպած շրջանակի ճակատին մի-մի պատող կեռ խաչ, ձախին՝ ձախից աջ, իսկ աջին՝ աջից ձախ:

Ճլպստի ծորի վերին մասը ալժմ կոչվում է Փիրովաղ:

Վանքի աջ ավանդատան պատին երևում է մեկ ձիավորի պատկեր, կանաչ, փշացած, առջևը կանքնած է մի մարդ շուրջառով, տակը երկու տող գրված կարմիր ներկով.

1 (առջև բողոքովին չի կարդացվում)

2 [Քրիստ խափորի [ամէն?]:

0,89 մ. ներքեւ, սպիտակ ծեփի վրա, կա 3 տող սև պատերով գրված, կարմիր գծերի հետքերով՝ վերից վար: Գրվածը բոլորովին չի կարդացվում. վերջին տողերում երևում են միայն... ազլադտ... տառերի հետքերը:

Վանքի հին պատերից մնացել են սրբատաշ քարերով շինված կամարակապ դռան երկու ոտքերը, մուտքը հարավից դեպի Հյուսիս, իսկ պարիսպը ունեցել է դրսից, արևմտյան կողմը, կիսաբոլորակ մի բուրդ, ուրիշ բուրդերի հետքերը չեն երևում. Ծենքերի մնացորդները ձգվում են բավական երկար տարածությամբ դեպի հարավ: Մի բուրգի մնացորդը էլ երևում է պարսպի հարավ-արևմտյան լույս անկյունում: Ավելանակների մեջ ընկած է մի վեմքար պարսպի արևմտյան կողմը 0,90 մ. բարձրությամբ: Փլատակներից հավաքած քարակույտերի մեջ (այժմ արտ է) ընկած է մի խոյակ:

Ճաշից հետո գնացինք ուսումնասիրելու Բյուրականի շուրջը գտնվող հնությունները: Ամենից առաջ անցանք հին գերեզմանատունը պարտեզների մեջ: Ճանապարհի կողքին («Ծերունենց Մարտիրոսի այգում») կա մի խաչքար, հավանորեն ԺԱ դարի: Վերևուն ուսանակներ, բուն խաչի հորիզոնական թեկութիւնը կազմում է խաղողի ողկուզդ իր բարունակով. խաչի խարիսխը դեպի վեր բարձրացող արմավենիկով, իսկ պակելի ներքեւ՝ ոճավորված արմավենու ճյուղեր հորիզոնական ուղղությամբ. խաչի շրջանակը՝ իրար կտրող բոլորակ շրջաններից կազմած զարդ:

Աղյօթի և Բյուրականի միջև գտնվող Բյուրականի հին գերեզմանատանը կա մի ցածր-սրբիկ օրորոցածե հին տապանաքար, երկարությունը 1,85 մ., կողերը՝ 0,46 մ., տառերի երկարությունը 7,5 սմ.: Տապանաքարի վրա խիստ բարակ տառերով գրված է հետևյալը, որից կարելի է եղանակացնել, որ դա երածշտի գերեզման է:

Աստանաւ անկեալ դեմ ողորմելի Լ. Ե

[գլխիս լոեալ]

Զայնուրեամբ թեար յաղցրաբարքուն

Երածշտի անունը չի հիշատակված, եթե հինգերորդ անընթեռնելի բառը [Մա] բ[գ]իս չկարդանք, որպիսի ընթերցումը դժվարություններ է հարուցում, բանի որ [Մա] տառերի համար տեղ չկա, այլ միայն մի տառ կարող է տեղավորվել համապատասխան տեղում:

Այս արձանագրության տակ բանդակված է մի խաչ՝ եռանկյուն զարդերով:

Սրանից ոչ շատ հետու, դարձյալ Աղյօթի և Բյուրականի միջև, գտնվում է մի խաչքառ «Թուի Մանուկ» կողված, ժե—ժա դարից: Խաչքարի արձանագրությունը խաթարված է: Կարդացվում է միայն հետևյալը.

Այս... (մի բառ չի կարդացվում) բրիսս

Շահուլին եւ թվ (?) ԽԲ

Վերջին տողը՝ թվ. (?) ԽԲ խոշոր ելնդավոր, թվականի հարյուրակ ցուց տվող տառ ոք չի կարդացվում:

Սրանից ավելի ներքեւ, այդիների մեջ, Ամբերդի ձորի ձախ ափին, մնացել է մի փոքրիկ մատուռ, առջևը գավիթ, սրա առաջ գերեզմաններ, իսկ հարավ-արևմտյան կողմում մի քանի շինություններ: Մատուռից մնացել է բարիդը և ձախակողմյան ավանդատունը (հիմքերը), իսկ շենքի մասերից՝ շինուակաղաքարդ անկյունաքարը: Գավիթից մնացել է շինուակաղաքարդ անկյունաքարը, Պար խաչքանդակ, ինչպես և մի սյունախողյակ: Թվում է, թե այդ շենքերը ժգ կամ ժղ դարից են: Նույն տեղում կա մի արձանագրություն, որ շատ մաշված լինելով չի կարդացվում:

Ուղիղ սրա դիմացը, խոր ձորի երկու ապառաժոտ ափերին, գտնվում են բազմաթիվ նախապատմական քարայրներ, անհավասար բարձրությամբ, որոնց մի քանիսը մատշելի են, մյուսները՝ բոլորովին անմատշելի:

Որոշվեց ամսիս 22-ի, ուրբաթ օրվա համար, աշխատանքի բաժանում կատարել այսպես:

1) Թ. Թորամանյան և Գարեգին եպիսկոպոս պետք է գրաղվեն Բյուրականի եկեղեցու շափագրությամբ.

2) Տարագրոսին հանձնարարվում է հանել ինարլուի հուշաքանի էստամպաժը, ինչպես և վերևում հիշված երածշտի գերեզմանաքարինը, իսկ Ս. Տեր-Հակոբյան և Ե. Տեր-Մինասյան պետք է փորձեն բաց անել Վանքածորի մեծ քարայրի դուռը և քննել այն, որը ան հնարավոր է:

Սեպտեմբերի 22, ուրբաթ: Ամեն մեկն անցավ իրեն հանձնարարված գործին: Ս. Տեր-Հակոբյանը ու Ե. Տեր-Մինասյանը գնացին ուսումնասիրելու Վանքածորի քարայրը:

Քարայրի մուտքի վրայի մեծ քարը դեռ գցելուց հետո, բացվեց մի անցք, 0,85 մ.

լայնությամբ, բարձրությունը մեջտեղում 0,43 մ., երկու կողերը 0,36-ական մ.: Անցքը տանում է զեպի երկու բաժանմունքից բաղկացած մի բնական այր, որ արհեստականութեն մեծացրած և կանոնավորած է: Այրի բարձրությունն է 2,75 մ., երկու բաժանմունքի երկարությունն է 10 մ.: Առաջին բաժանմունքը լցված է բարերով, մեջը կա մի սանդ: Առաջին մասի շափերն են՝ 5 մ. լայնություն և 3,20 մ. բարձրություն. երկրորդ մասինը՝ 5 մ. լայնություն և 4,50 մ. բարձրություն: Դեպի բարայրը տանող անցքի երկարությունն է 11,50 մ. թերումներով, բարձրությունը՝ 0,50-ից մինչև 1,50 մ.: Դրսի մուտքից մինչև լուսամուտը 9,50 մ.:

Նույն օրը Գարեգին եպիսկոպոսը և Ե. Տեր-Մինասյանը գրի առին Բյուրականի եկեղեցու արձանագրությունները:

Ա.) Հարավային դռան ճակատին.

- 1 +ՆԳԳ բուականուրեանս
- 2 Հայոց այս իմ զի՝ («Ր»-ն չկա, «Ի»-ից հետո մի բութ) Ջախարէ իշխան
- 3 անաց իշխանի որդոյ Վահրամա որ
- 4 ազգաւ Պախող[ա] որ ետու զբիւրականի զրա (մնացել է «ա»-ի աջ գծի կեսը)
- 5 ստակն Շահանշահի իմ պատրոնին հույ
- 6 ոյն որ ու այս գրոյս [Բ]ական կա կամ
- 7 յիմոց Յովանիսի եւ իւր ամ[մ]էն ազգին

մեղացն ՏՐ

8 Եղիցի և Քի արեանն պարտական: ՅԺԲ նզով

9 ած է

Անկյունավոր փակագծերի մեջ առնված տառերը մաշված են:

Բ) Մրա տակը, դռան բառանկյունի ճակատաքարի զրա, շեղագրի նմանությամբ:

- 1 +-(Հավասարակող իշաչ: Փակերկույթը խորաքանդակ) ՆՂԳ բուականիս եւ Հայր Գրիգոր
- 2 որ Հայարադի զակնս դրի եւ զառուս

3 հանի եւ արունի հրամանով զՀայարադի

4 հանէս կարեցի Բյուրականի հանձաւեց [Բ]անապ

5 ..են ի վեր որ ի դրա[ծ] անցանի եւ Իշուրս ի Ելաբարուն

6 ..աւր ի Բյուրական եւ :Դ: Ի Հայարադն արդ (մնացածը փշացած)

7 ..ստակին եւ վաելիք զ[մել]զ յա... (մնացածը փշացած) իշէք ամէն

Անկյունավոր փակագծերի մեջ առնված տառերը մաշված են կամ կոտրած:

Ծող Ծ. Մի կամ երկու տառ պակաս՝ կոտըրված: «Ճ»-ի վրա պատիւ, «Ճ» և «Ճ» տառերը՝ շեղագիր:



ԱՄԲԵՐԴԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Ծող 6. «Աւր» բառից առաջ թիվ նշանակող տառը փշացած, երևի «Դ»:

Ծող 7. Պակասող տառերը պետք է լինեն վա, «Ա»-ն փշացած, «Ե»-ի ստորին փոքրիկ ծայրի մի մասը կոտրած:

Դ) զեպի աշ՝ սկ բարի վրա.

1 + ՆՂԳ: Թուական

2 իս ևս հայր

3 Գրիգոր որ զՀայա

4 բաղին զակն դրի եւ

5 զառուն հանիլ]

6 ՈՐ Վաստակի[Ը]

7 զմեզ յաղաւը[Ա]

8 լիշէն

Անկյունավոր փակագծերի մնջ առնված տառերը փշացած են:

Դ) Եկեղեցու դռան մուտ, ներսը զրած խաչքարի վրա.

Մթ խաչ բարեխաւս Հովհաննէս կրամ.

Խաչի Հորիզոնական թևերի տակ՝ Թ[Ա] Զ Խաչքարի բարձրությունն է 1,59 մ., լայնությունը՝ 0,84 մ., Հաստությունը՝ 0,22 մ., պատվանդանի բարձրությունը՝ 0,43 մ., լայնությունը՝ 0,84 մ.:

նույն օրը, սեպտեմբերի 22-ին, ճաշից հետո, Գարեգին եպիսկոպոսի հետ, ստուգիցինք ինաբլուի արձանագրությունները ԱՀա՛ այդ արձանագրությունները.

#### Ա) Կաթոնաղբարութիւն

- 1 Այս զիւ Շահին և Նորբաւ[ր] Հայրապէտ վարչապետ առաջնորդի ուխտիս
- 2 Ես վարդապետի առաջնորդի ուխտիս
- Բ) Կիրակմատի կոչված մատուռում մի խաչքարի ներքերի մասի (վերիի մասը բացակայում է) վրա գրված է՝
- 1 Ես Հայրապետ վարդապետ առաջնորդ
- 2 ուղ ոստր ուխտիս կանգնեցի զիւաչս հաշի պատվանդանի վրա գրված է՝
- 3 Բարեխաւս ինձ և հաստատեցի
4. միաբանաւս (շարունակությունը չկա)
- «Բարեխաւս ինձ» բառերը գրված են կապքերով:

Գ) Կա մի խաչքար եկեղեցու հարավային դռան կողքի պատի մեջ, պատվանդանը՝ մի հին խոյակ  $0,72 \times 0,87$  մ. մեծությամբ. խաչքարի չափերը՝ երկարությունը 1,43 մ., լայնությունը՝ 0,82 մ. և հաստությունը՝ 0,21 մ.: Խաչքարի արձանագրությունը հետեւյալն է.

- 1 + ի ՈՒԹ բուական
- 2 ուրինս ես Զաքար
- 3 և ամիր սպասալար Հա
- 4 յոց եւ Վրաց որդի մ
- 5 եծին Սարգսի առի զանա
- 6 ոիկ ամրոց զենքերոյ յաղախնայ
- 7 ծին որդոյն Հաւառու որ
- 8 ... (փշացած) ... ի սմա
- 9 ի կորուս Քրիստոնէից և յաւեր
- 10 եկեղեցեաց եւ ետու առնել զնշ

Այս խաչքարն սկզբնապես եղել է անշուշտ Ամբերդում և նրա կործանումից հետո միայն կարող էր այստեղ ընկնել:

Դ) Եկեղեցու հարավական անկյունում, փերջերս կատարած նորոգության ժամանակ, զրել են դարձյալ այլ տեղից բերված  $1,21 \times 0,27$  մ. մեծությամբ մի քար հետեւյալ արձանագրությամբ.

- 1 ի բու ՈՀ ես Ռոբէն ետու զիմ այգին ի սուրբ
- 2 եւ առաջնորդ Հայրապետ վարդապետ սահմանական ամի :Ա: Պատարագ որ ով խա
- 3 նեցի զամենայն ամի :Ա: Պատարագ որ ով խա
- 4 փանէ դատի Քրիստոսէ զտաւն Ղազարու
- 5) Եկեղեցու բեմի խորանների արձանագրությունը.
- 1 ի ք ՈՀԸ ես Լուսեղինս տվ

2 ի...դեհեկան և խոստացյալ 3 և Ա: աւր ծամ ի տաւն Սուրբ Յակովայ Մյուս արձանագրության մնացորդների մեջ կարդացվում է.

1 ...և Հայրապետ վարդապետ սահմանեց ի սուրբ

2 ...Անտոնի :Ա: աւր պատարագ ամէնին նույն օրը, սեպտեմբերի 22-ի երեկոյան, որոշվեց ամսիս 23-ի շաբաթ օրվա աշխատանքի բաժանումը կատարել ըստ այսմ.

1) Տարագրոսը պետք է հանի ինաբլուի խաչքարի արձանագրության էստամպածը, ինչպիս և նախորդ օրը մատնանշված արձանագրությունների էստամպածները.

2) Թ. Թորամանյանը և Գարեգին եպիսկոպոսը շարունակում են եկեղեցու շափագրությունն ու վերջացնում են լուսանկարչական աշխատանքները.

3) Սեր-Հակոբյանն սկսում է քարայրների ուսումնասիրությունը Ամբերդի ձորի ներքեւում, Բյուրականի դիմաց:

4) Ե. Տեր-Մինասյանը շարունակում է արձանագրությունների ընթերցումը հին գերեզմանատանն ու մատուռում և մի անգամ էլ ստուգում արդեն կարդացածները:

Ընկերներից յուրաքանչյուրը երեկոյան զեկուցեց իր կատարած աշխատանքների մասին: Արձանագրվեց, որ Բյուրականի և Աղցբի միջև ընկած այգիներում կան հնության շատ բեկորներ, խաչքարերի մասեր, արձանագրությունների բեկորներ, հին շենքերի հետքեր և այլն. օրինակ՝ Ե. Տեր-Մինասյանը հայտնեց, որ մատուռի կամ գյուղատեղով շրջապատված փոքրիկ եկեղեցու ավերակների մեջ նա տեսել է մի խոշոր կարմիր քար  $0,97 \times 0,54$  մ. մեծությամբ, որի վրա կատարածնագրությունը քարը փշացած է և արձանագրությունը սաստիկ մամուկալած, այնպիս որ հազիվ նշմարվում են առանձին տառեր: Որոշակի կարդացվում է միայն թվականը՝ + ՈՌԹ:

Բյուրականի և նրա անմիջական շրջակայթի ուսումնասիրությունը համարելով ավարտված, որոշվեց հետևյալ օրը, սեպտեմբերի 24-ին, առավոտյան ժամը 8-ին մեկնել Ամբերդ:

24 սեպտեմբերի, Կիրակի: Բավական մեծ ուշացումով ստանալով Բյուրականի գյուղխորհրդից բեռնակիր անասուններ և ուղեցուց անձնագորություն, ժամը - 12-ին դուրս եկանք Բյուրականից դեպի Ամբերդ, ուր մեծ դժվարություններով հասանք, բեռները մի քանի անգամ շուր գալու և բեռնակիր անսուններին հանգիստ տալու անհրաժեշտության պատճառով երեկոյան ժամը 5.30-ին, իսկ ոմանք էլ հազիվ 6.30-ին: Հեռավից, Գյու-

զրու կոչված աղբյուրից Գարեգին եպիսկոպոսը, Ս. Տեր-Հակոբյանը և Տարագրոսը ինքնաեռով շուր բերին: Թեյ խմելոց հետո, սաստիկ հոգնած լինելու պատճառով, անմիշակն տեղափորվեցինք եկեղեցու Հարավարևմտյան խորանում և շատ հանգիստ բնեցինք: Գիշերը լավ ցուրտ էր և ոչ ոք փորձ անգամ շարեց խորանից գուրս գալ և մաքուր օդում անցկացնել:

25 սեպտեմբերի, Երկուշաբթի: Առավոտյան կանուխ անցանք Ամբերդի ամրոցի ուսումնասիրության գործին: Այստեղ բերում ենք այն համառոտ նշումներն ու գիտողությունները, որ արվել են տեղուուեղը:

Ամբերդի արևելահարավային պատի հաստությունն է 1,64 մ.: Ամրոցի հարավարևելյան մասն ունի 4 բաժանմունք և մի միջանցք ամբողջ երկարությամբ: Բաժանմունքներից յուրաքանչյուրն ունի մի միջանցք ամբողջ հարավարևելյան և կողքերից երկու փոքր պատուհաններ: Մեծ պատուհաններից երկուսը բոլորակ են և երկուսը բառանկունի: Պատուհանների բարձրությունն է 2,18 մ., բացվածքը՝ զրոսի կողմը 1,09 մ., ներսի կողմից՝ 1,23 մ.: Ամբողջ շենքը բաղկացած է 3 հարկից, յուրաքանչյուր հարկում համապատասխանաբար կրկնվում են խոշոր պատուհանները: Միջանցքի հետին արևելյան պատը ամրացված է եղել երեք բուրգով և ծառայել է որպես արտաքին պարիսպ: Հետագայում պետք է զգացվել կրկնակի ամրացնելու և սրա առջևից շինել են նոր պարիսպ 4 կիսաբոլորակ աշտարակներով: Այդ արտաքին պարսպի պատի հաստությունն է 1,90 մ.:

Բերդի արտաքին պարիսպը արևելահաստուիսային կողմի ձորի վրա ունի վեց աշտարակ: Ամբողջ ամրոցը կառուցված է երկու ձորերի միացման թերակղզու վրա: Արևմտահարավային կողմից անդնդախոր ձորում է Ամբերդի գետակը, իսկ արևելահաստուիսային կողմից, զարձյալ անդնդախոր ձորում, հոսում է նրա մեջ թափվող մի գետակ: Այդ ձորի անունը, բայ տեղացիների տված տեղեկության, Արխաշան է:

Ամրոցի զրոսի պարիսպը ներսի կողմից ունի վերի բարձրանալու քարե սանդուղք՝ պատի մեջ ագուցված:

Նոր պարսպի արևմտահարավային անկյունի բուրգն ունի նույն անկյունում մի դուռ, որով բարձրանում են դեպի բերդի հին ու նոր արտաքին պարիսպների միջանցքը: Այդ դռան շափերն են՝ բարձրությունը՝ 1,70 մ., լայնությունը՝ 0,85 մ.:

Պարիսպները երկու կողմից էլ հասել են մինչև ձորերի հսկայական ժայռերը, որով ամրոցը բոլորովին անմատչելի է դարձել:

Երկու ձորերի կողմից էլ բերդն ունի զրոներ, որոնց շինությունը տարբեր ժամանակների պատկանում հավանութիւն:

Բերդի հյուսիսարևմտյան կողմում գրտնը բուրգով է մի բնական բարայրի մնացորդ, որը հետագայում մարդկան է և բնակության հարմարեցված: այստեղից մի ճանապարհ մարդկային ձեռքով ճեղքված ժայռի միջով գալիս միանում է բերդի ճանապարհի հետ: Ճեղքածքի լայնությունն է 1,50 մետր, իսկ երկարությունը՝ 14 մ.:

Թիրակղզու սրածայր մասում նկատելի են ուրարտական ամրոցի պատեր և հետքեր՝ տաշված և անտաշ որդաքարերով: Ինչպիսի երկում է այդ ամրոցը կառուցվել է երկաթի զարում, գործիքների որոշ չափով կատարելագործված շրջանում: Միայն բուրգերը հետո են ավելացված և ուրարտական չեն:

Նույն օրը և հետեւյալ առավոտը, երեքշաբթի, սեպտեմբերի 26-ին, մեծ զժվարություններով կարգացինք Գարեգին եպիսկոպոսի հետ հետեւյալ արձանագրությունները.

Ա) Եկեղեցու հարավային պատի վրա<sup>2</sup>:

1 Ի Ժ Ճ Ա Մ Ա Կ Ս Ա Մ Ե Ր

2 Ո Ւ Բ Ե Խ Ա Մ Ե Ր

3 Ե Ւ Ն Չ Ա Բ Ի Վ Ե Ր Ա Կ Ա Վ

4 Ո Ւ Բ Ե Խ Ա Մ Ե Ր

5 Չ Ի Բ Մ Ե Բ Ա Մ Ե Բ Ա Մ Ե Ր

6 Դ Պ Ա Մ Ա Բ ... (մի անհասկանալի բառ՝ զբոշթրոց)

7 Ե Ա Պ Ո Ւ Բ Կ Ե Ա Ն Տ Ե Լ

8 Ռ Ո Ւ Ե Ա Մ Ե Ր Ա Կ Ա Վ

9 Մ Ե Ջ Ի Բ Պ Ա Մ Ե Ր

10 Ա Բ Ե Ա Մ Ե Ր

11 Ա Ր Ա Վ Մ Ե Ր Ե Ն Ե Շ Ե Լ

12 Ո Շ Ո Վ Ի Բ Ա Կ Ա Վ (?) Ե Գ Ո Վ Ի Յ Ա Յ Ե Լ Ե Ա Յ Ի Բ Ժ Ո Ղ Ո Վ Ի Բ ... Ա Մ Ե Բ<sup>3</sup>

Շատ տառեր այս արձանագրության մնջացած են կամ չարդված, բառերը գրված են տառերի միացումներով: 1—11 տողերը մի քարի վրա են, իսկ 12-րդը նրանից ներքեւ 3 քարի վրա:

Բ) Հյուսիսային զռան արձանագրությունը՝ ներսի կողմից կիսաբոլորակածել:

1 Յ Ա Մ Ի Բ Ն Հ Ե Յ

2 Ե Ա Խ Ա Մ Ա Վ Ա Ր Ի Ա Մ Ե Ր

3 Ե Ա Ե Յ Վ Ա Ր Ո Ղ Ի Կ Ա Ս Ա Մ Ե Ր

<sup>2</sup> Հմմատ. 2. Ղ. Ալիշան, «Ալյարատ», էջ 156:


<sup>3</sup> Հմմատ. Հովհաննես Եպիսկոպոս Շահիսարունյանց, «Ատորագրութիւն Կաթողիկէ Եշմիածնի և հինգ զաւացն Արարատայ», Բ, Եջմիածին, 1842 թ., էջ 71, որտեղ բերված է այս արձանագրությունը՝ պահասաւորությունը:

- 4 Հայրապետական եւ սահման  
5 եցի պառող նիգի տունն թ. կապին  
6 gr յԱրագածոտնի, յէզին թ. փաս  
դի [նի?]  
7 ի բաղդա դաշտի թարակն: ժ. լիտ  
յերեկ (?)  
8 ն. Ա. դի. յիւրոչէ կնոջէ (?) Գ. դի.  
հողադրը ձեռ  
9 նաղերէ է. Դ. յԱնքերդի պառողն  
տունն  
10 Դ. կապին gr. Ա. կտաւահատ. Ա...  
(մի անընթեռնելի բառ) զ  
11 ջաղացն վերա կարմենին ի պսակի Գ.  
12 դի. հողադր կեմադր տեսարինն. ժողով  
13 ուրդ որ ոչ կատարէ պատմեցի յԱյ  
14 իշխան որ տիրէ հակառ կա դատի յԱյ  
Այս արձանագրության 2-րդ տողի վերջին  
երկու տառերը բոլորովին փշացած են. երե-  
վում է միայն «Ղ»-ի կեսը: 14-րդ տողի «ափ-  
րէ» բառից հետո մի տառ չի կարդացվում:  
Առհասարակ այս արձանագրությունը խիստ  
փշացած է և կարելի եղավ կարդալ միայն  
Տարագրոսի հանած էստամպաժից հետո:  
Դ) Տարավային դուն ճակատաքարի ար-  
ձանագրությունն այնքան մաշված էր, որ  
հնար շեղավ կարդալ նույնիսկ Տարագրոսի  
հանած էստամպաժի օգնությամբ:  
Կիսով չափ կարդացվում է միայն առաջին  
տողը՝  
1 Ողորմութեամբ Այ ես Մի... ձեռնաւ...  
նույն օրը Թ. Թորամանյանը շափագրեց  
և կեղեցին:  
Ճաշից հետո ժամը 3-ին անցանք Ամբեր-  
դի ձորը, գիշերեցինք հովվական վրաննե-  
րում և սեպտեմբերի 27-ին, չորեցարթի,  
առավոտյան ժամը 8ին, մեկնեցինք դեպի  
Տեղեր:  
Սեպտեմբերի 27, չորեցարթի և սեպտեմ-  
բերի 28, հինգշարքի. Տեղերի արձանագրու-  
թյունների բերեցում:  
Ա) Եկեղեցու հարավային դուն առաջ ըն-  
կած մի ջարդված քարի վրա.  
1 (տողը փշացած է, չի կարդացվում)  
2 (տողի կեսը փշացած է) ...են թ. աւր  
ժամ  
3 որ խափանէ մեր մեղաց  
4 տէր է  
Բ) Տաճարի արևմտյան դուն կամարի  
վրա կարդացվում է երկու տող կիսով չափ  
փշացած արձանագրությունից հետեւալը.  
1 +ի թի ՈԿԲ ...ածանէր եւ բարեպաշտ  
եղաց Շահնշան Զաբարէի... շինեցաւ  
Ար Ածածին
- 2 ի ձեռն ածանէր ...մեծի իշխանին Արու-  
սի ... ունին որ մեծաւ յուսով  
Կամարի բարձրությունն է 1,12 մ., լայ-  
նությունը՝ 2,03 մ., տառերը՝ 6 սմ.:  
Գ) Տաճարի արևմտյան դուն կամարա-  
կապ բարի վրա՝ կամարի տակ (բարի վերին  
մասը կոտրված լինելու պատճառով արձա-  
նագրության երկու տողը չի կարդացվում).  
3 ըստ Վաշէի բարեպաշտ իշխանի որ էր  
կարգ  
4 ել երամանաւ Զաբարէի վերակացու  
գաւառի  
5 ս միամիտ յամենայն գուրծու տէրունի  
եւ սա  
6 միմանցին սպասաւոր սուրբ ուխտիս  
յիշատակ նո  
7 ցա մատուցանել պատարագ զՄառզար-  
դարն Զաբար  
8 բէի զամէն... Եցիմ... զՎարդավառին  
շաբարն եւ  
9 զիմանցին Վաշէի զամէն եկեղեցին եւ  
յամենայ  
10 ն շաբար ... Մամախարունին առնել  
յաւա  
11 գ խորանին ... յիշատակի հաստատէ  
շնորհին  
12 Քի . . . տապան են առաջի Այ ամէն  
Ամբողջ արձանագրության ձախակողմյան  
կեսը (հայողի կողմից) եղծված է և փշացած:  
Դ) Տաճարի արևմտյան կամ գավթի արե-  
վելյան պատի վրա, ձախ դասի դիմաց  
(բարձրությունը՝ 0,56 մ., լայնությունը՝ 1,80  
մ., տառերը՝ 7,5 սմ.).  
1+ի թի: Ես Շիրազարս եւ ամուսին  
իմ Աղջայս եւ  
2 Սրախկս որդաւ մերաւ միաբանեցամ  
սրբաց եւ տվամ զմեր  
3 հոգորածինս :Ռ: սպ :Ղ: ոչխ :Ա: կան-  
քեն :Ա: նափորս և մեզ խոստացան  
4 ի յամին :Ե: սուրբ պատարագս Հոգոյն  
գալստենին (?) եւ անպակաս արենն որ-  
շափ  
5 կենալանի ենք պարոնին արենն ինչ մե-  
ռանին զմեր աւեն մեզ արենն  
6 կատարիշ գրոյս աւենին յԱյ ամէն  
Շան  
6) Գավթի ձախ դասի առաջին սյան խո-  
յակի հյուսիսային ճակատին.  
1 ի թի :Ռ: Ես Աղբայրիկ վարդապ  
2 ետ շինեցի զեկեղեցին եւ  
3 զգափս եւ միաբանեցամ ար  
4 դեամ եւ սապասաւորս հա

- 5 ստատեցին :Բ: աւր ժամ ինձ  
 6 սր խաչին որ խափանէ դատիլ յԱլ  
 9) Հարավային պատի վրա (բարձրությունը՝ 0,56 մ., լայնությունը՝ 1 մ., տառերը՝ 7 սմ.).
- 1 Ննորհին Քի ես կանոսս եւ Ելզա  
 2 քունս եւ որդի մեր Սաղոսս միաբանե  
 3 ցամ սուրբ ովստիս եւ տվամ զմեր հոդ  
 4 ոյ բաժինս եւ ընկալամք ի յամին :Բ: պատ  
 5 արագ ի նոր Կիրակին ուշափ կենդանի  
 6 ենք մեր ծնդ այնունեան (?) մեզ է (կի-  
 ստ է)  
 է) Նույն պատին սպիտակ ֆոնի վրա սև  
 ներկով (բարձրությունը՝ 0,72 մ., լայնու-  
 թյունը՝ 0,96 մ., տառերը՝ 8 սմ.).
- 1 Յուսովն Ալ ես Խորթոյս եւ Տի  
 2 բանցու եւ մեր որդիս Ամիրս միաբանե-  
 ցամ  
 3 Սր ովստիս եւ տվամ ինչ սրբոցս եւ  
 4 մեզ խոստացան ի տարին :Գ: աւր  
 պատարագ  
 5 կատարիչին աւրինին ամէն: թվ:  
 6 ՉԾԲ (?)  
 թ) Նույն պատին (բարձրությունը՝ 0,55 մ.,  
 լայնությունը՝ 1,14 մ., տառերը՝ 8 սմ.).
- 1 + Կամաւն Ալ ես Վասիլս եւ Քրի  
 2 ստոճախ միաբանեցամ սր Ածած  
 3 նիս եւ տվամ ինչ եւ սովա խոստացան  
 4 ի տարին :Բ: պատարագ ի տանի Յո-  
 հանու եւ  
 5 Յակոբա կատարիչից գրոյս աւրինին  
 6 յԱլ ամէն  
 թ) Սրա տակը (բարձրությունը՝ 0,51 մ.,  
 լայնությունը՝ 0,97 մ., տառերը՝ 7 սմ.).
- 1 ես Գերգու եւ աղբեանցու միաբա  
 2 նեցամ սուրբ ովստիս եւ խոստաց  
 3 ան մեզ ի տարին :Բ: աւր պատար  
 4 ագ ի տանի Գուրգս զարտավարին  
 5 կատարիչին աւրինին ամէն ի Չօթ  
 ժ) Հարավային պատին դասին կից, կար-  
 պացվում է միայն առաջին տողը և երկրորդ  
 ու երրորդ տողերի առաջին կեսը, մնացածը  
 փշացած է (բարձրությունը՝ 0,56 մ., լայնու-  
 թյունը՝ 1,13 մ., տառերը՝ 8 սմ.).
- 4 + ի բռ :Գ: ես Խոցադեղս եւ Թ  
 2 դագոնին . . . Եցամ որ  
 3 Ածածնին . . . ո  
 4 . . . . . եւ
- 5 . . . . . ազի  
 6 . . . . . ոսի  
 ԺԱԿՈՎԻՍԱՅԻՆ պատին (բարձրությունը՝ 0,57 մ., լայնությունը՝ 1,42 մ., տառերը՝ 8 սմ.).
- 1 ՈՉԲ
- 2 Ողորմութեամբն Ալ ես Շառս միաբանե  
 3 ցա սր ովստիս եւ հոռո սակաւ ընծաւ և  
 4 և սովա ընկալամք իրեւ զմեծ եւ հոռու  
 5 Բ: աւր պատարագ ի տանի Սր Գրիգորի  
 6 որ ի պահսն . . . (անընթեռնելի  
 բառեր)
- 7 . . . որ խափանէ մեր խոճիս տեր է  
 Հետագայում անկյունում ավելացրած է  
 ՊՐԱՍ լիշ  
 ԺԲ) Եկեղեցու դռան աջ դասի կողմը  
 (բարձրությունը՝ 0,70 մ., լայնությունը՝  
 1,20 մ., տառերը՝ 8 սմ.).
- 1 Ննորհին եւ ողորմութեամբն Ալ ես  
 Ամիր (?)  
 2 Սարգիս եւ Թաներ միաբան [եցա] բ  
 3 Ածածնիս եւ տուամ զ . . .  
 4 եւ սպասաւոք խոստ [աց]ան... նպատ  
 5 արագ ի տանի Սր Սարգսի . . .  
 6 ին յԱլ . . .
- ԺԳ) Աշ դասի դիմաց, Եկեղեցու արևմտյան  
 պատին (բարձրությունը՝ 0,60 մ., լայնու-  
 թյունը՝ 0,80 մ., տառերը՝ 7 սմ.).
- 1 Ողորմութեամբն Ալ Սարգսիս ու  
 2 . . . միաբանեցամ սր ովստիս  
 3 եւ տվամ զմեր հոգորածինն սրբ  
 4 ց եւ մեզ խոստացան ի տարին :Բ: աւր  
 5 պատարագ կատարիչին աւրինին ամէն  
 ԺԴ) Ժամատան դռան ճակատին, դրսից,  
 արևմուտքից (բարի բարձրությունը՝ 1,24 մ.,  
 լայնությունը՝ 1,85 մ., զրված՝ 1,06 մ., տա-  
 ռերը՝ 8 սմ.).
- 1 ՈՉԱ
- 2 Ննորհին Ալ ես Մա  
 3 մախաբուն շինեցի զեկեղեց  
 4 իմս զմեծ եւ զինոք եւ զմամատունս յի  
 5 շատակ ինձ և առն իմոյ վաշէի խոկ  
 բնակիչը  
 6 սր ովստիս հաստատեցին մեզ ի տարին  
 պատարագ ի  
 7 տանի Վարազս Սր Խաչին զամենայն  
 եկեղեցինս


Յանձնիք պատճենը՝ կուտակում

ՀԱՅԻ ՏՎԱԿՆԵՐԸ—ԹԵՐԵՎԱՆԻ ԿԱՐՈՒՅՈՒՆ



Ապարիչ՝ ԳՐՈՒԹՈՒՐ ԱՎԱՐԳՅԱՆ

Ս Ա Ն Ա Հ Ն Ի Կ Ա Ն Ք Հ Ը  
ԿԱՐԻՌԵՎԱՆ Ժ Ժ Բ Դ Ա Ա Բ Ո Ւ Մ Մ



- 8 մատաղով եւ սիրով իսկ որ զգրեալս  
խափանէ նայ
- 9 տայ պատասխանի առաջի թի Միսի-  
քար գրիչ<sup>4</sup>
- ԺԵ) ժամատան արևելյան պատին, դրսից  
(բարձրությունը՝ 0,58 մ., լայնությունը՝  
0,76 մ., տառերը՝ 6 սմ.).
- 1 Ութ (վերևի քարի վրա. մնացածը մի  
քարի վրա)
- 2 Շեռնիւն թի ես Խճռորդիկս միաբ
- 3 անեցա սր ուխտիս Տեղերո եւ
- 4 ետու յառաջ զիմ այզին ի
- 5 Թամիր եւ յետ իմ մահու
- 6 ան այլ զինչ լինի եւ սուխ ե
- 7 տում ի տարին :Բ: աւր պատարագ
- 8 Ա: Խճռորդին :Ա: թատափն ով . . .
- ԺԶ) Տաճարի գմբեթի թմբուկի վրա, Հա-  
րավից.
- Ի թի ՈԿ
- Միավորը (Բ) կարող է ընկած լինել (քարն  
ընկած է), մանավանդ որ արևմտյան դռան  
ճակատի արձանագրության մեջ գրված է  
«ԸՆԿՅ» (տե՛ս արձանագրություն Բ, էջ 51):
- ԺԵ) Տաճարի արևմտյան ֆրոնտոնի վրա,  
լուսամուտից աջ (նայողից) ենդավոր խաչ  
հիտեյալ արձանագրությամբ.
- 1 Յա թի զաս
- 2 Եկատագս
- 3 յաղար
- 4 ս լիշեցէք
- ԺԸ) Տաճարի մեջ, Հարավային պատին  
(բարձրությունը՝ 0,52 մ., լայնությունը՝  
0,82 մ., տառերը՝ 6 սմ.).
- 1 Ի Խաւակառեց Սր Տիր
- 2 ամաւը մատուցանի
- 3 պատարագ ամենայն խ
- 4 ուրան Վախախին մաւր
- 5 Մամախարունին շինո
- 6 դի եկեղեցոյս
- ԺԹ) Եկեղեցու աջ խորանում (ավանդա-  
տանը), մի տափակ գերեզմանի վրա.

ՎՊ ՅԱ

ի) ժամատան արևմտյան պատին փորա-  
գրված են խաչեր հիտեյալ արձանագրու-  
թյուններով.

1 Ած ողորմի ծաղկանն

2 զթուղեր յիշ

<sup>4</sup> Հմմատ Շահխարունյանց, «Ստորագրութիւն...», թ,  
էջ 68-69, որ ունի միայն այս արձանագրությունը:  
Տե՛ս նաև Հ. Ա. Ալիշան, «Ալյարատ», էջ 147:

- 3 զՄարիամ յիշ
- 4 զՄիսիքար յիշ
- 5 զԱբրահամ ոն բազմամեղ յիշեցէք
- 6 Սիմէն Առաքեալն յիշեց
- ԻԱ) Տաճարի արևելյան կողմում ընկած  
մի տապանաքարի վրա արձանագրված է.  
Վարդապետ  
Յոհանն

ԻԲ) Տաճարի հարավային կողմում մի  
տապանաքարի վրա արձանագրված է.

ՎՊ ՄԻ

ԻԳ) ժամատան հարավային պատին, դա-  
սում (բարձրությունը՝ 0,50 մ., լայնությու-  
նը՝ 0,80 մ., տառերը՝ 6 սմ.).

1 Կամաւ ԱՅ ես աղախին

2 Քի Շահրահազ միաբա

3 նեցա սր ուխտիս (այսպես!) եւ ետու ս

4 ակաւ արդինք եւ ս . . .

5 յաստատեցին (այսպես!) . . .

6 աւր պատարագ ի ս . . . ակո

ԻԴ) Տաճարի դռան ձախ կողմը.

1 Շեռնիւն թի ես Դափր ու թ

2 արքողիմոս միաբանեցաք

3 սր ուխտիս եւ տվաք մեր . . .

4 . . . նոգորածին . . .

5 . . . սրբցու եւ սուխ

6 խոստացան ի տարին :Բ: պատար

7 ագ ի տաենի Դափրի մարգարէին

8 . . . (կեն տող արձանա-  
գրություն չի կարդացվում)ԻԵ) Սրա տակը, դռան ձախ կողմը, կիսով  
շափ փշացած.

1 Ես Աղբայ . . .

2 այզին զաղրի . . .

3 եւ Սր Ածածին . . .

4 ԵՐ հաստատե . . .

5 . . . Համբարձման . . .

6 մեղացու ար . . .

Պիտք է ասել, որ ժամատան մեջ կան  
5-6-ից ավելի բոլորովին անընթեռնելի ար-  
ձանագրություններ են:

ԻԶ) ժամատան երդիկը ճառագայթներով  
բաժանված է մասերի, որոնցից մեկի մեջ  
բանդակված է մի խաչ, սրա գլխին ենդավոր  
տառերով.

Պ

ԵՏ

ՌՈՒ

իէ) Եկեղեցու հյուսիսային կողմը քաշած նոր պատի մեջ զրված է մի արձանագրության մնացորդ (բարձրությունը՝ 0,24 մ., լայնությունը՝ 0,79 մ., տառերը՝ 3,5 սմ.).

1 Ես Խ[ո]ցադեղ եւ Գոհ . . . . .

2 Դիմիս ի շինութի . . . . .

3 զԱՐ Գէորգին շաբաթը

իԾ) Ժամատան արևմտյան պատի ճակատին, դրսից.

1 Կամաւ Այ ես Յոհանէս . . . . .

2 Ետու Ածածնիս եւ . . . իմ ուղ

3 ոյն արենազին վարդապետաց (?) բարեխօսուն

4 Քեամբու բարի ինչ (?) առնել (?) եւ սպասաւոր Ետուն

5 ի տարին . . . աւր ժամ ի տան ԱՐ Գրիգորի

6 . . . . . (մի ամբողջ տող չի կարդացվում)

իԾ) Տաճարի դռան կամարի գլխին կա մի մեծ արձանագրություն սպիտակ ֆոնի վրա ու ներկով, ութ երկար տողից, որը բոլորովին եղծված է և չի կարդացվում:

լ) Տաճարի հարավային պատի արեւելյան նիշի մեջ սպիտակ ներկով զրված է.

1 Թիվ. Զետ

2 Ով եղբայր

3 Երէ կամ

4 աւ շարշար

5 իմ վարձէ է ձ

6 Եզ թէ յակամ

7 այ տնտեսուն

8 Րի . . . (մնացածը եղծված է և չի կարդացվում)

լլ) Եկեղեց գյուղի հարավային կողմում գտնվում է մի ավերված մատուռի մնացորդ, նորոգված ցեխե պատերով և փայտե հասարակ ծածկով: Մեջը գտնվում է մի խաչքար, բարձրությունը՝ 1,56 մ., լայնությունը՝ 0,73 մ., խորությունը՝ 0,23 մ., նրա քառակողմունի պատվանդանի բարձրությունն է 0,68 մ., լայնությունը՝ 0,82 մ., խորությունը՝ 0,70 մ.: Պատվանդանի վրա փորագրված է հետեւյալ արձանագրությունը.

1 Կամաւ Այ ես Վախ

2 ախս զջուրս բերի եւ զ

3 խաչս կանկնեցի որք

4 Երկիրպագանէլ յա

5 դաւրս յիշեցէ Թ. ՈԿ (?) («Կ»-ի մի մասը չարդարված է, միավոր էլ չի երելում)

Մինչ Գարեգին եպիսկոպոսն և ես սեպակեմբերի 27-ին և 28-ին զբաղված էինք Տեղերի այս 31 արձանագրությունների ընթերցումով և ստուգմամբ, Թ. Թորամանյանը, Տարագրոսի օգնությամբ, մանրամասնորեն շափագրում էր Տեղերի եկեղեցիներն ու ժամատունը, իսկ Ս. Տեղ-Հակոբյանը զբաղված էր քարայրների և ուրարտական ամրոցների մնացորդների ուսումնասիրությամբ՝ շրջելով ամբողջ Շաղվերտի հովիտը և լինելով Լաղորիան, Թաքիա, Փարսի, Փաթրինչ, Այարլու և Ղղթամիր գլուղերում: Իր աշխատանքն ավարտած համարի մեջ ներկայացնելով, Ս. Տեղ-Հակոբյանը բաժանվեց մեկնեցմիածին: Մյուսներս, սեպակեմբերի 28-ի երեկոյան ժամը 5-ին, Տեղերից գուրս եկանք և մեկնեցինք դեպի Բյուրական: Ճանապարհին Գարեգին եպիսկոպոսը և ես գնացինք Օրգով կոչված գյուղը, զիտեցինք այնտեղ մի հին եկեղեցուց մնացած շնչին մնացորդներ և Մաշաղի Արասի տան ավերակների մեջ կոտրատված արձանագրությունների բեկորներ և այլն: Երեկոյան ժամը 7.30-ին հասնք Բյուրական, բոլորս էլ անխտիր սաստիկ հարբուժով հիվանդ:

Որոշեցինք առաջիկա երկու օրում վերջացնել աշխատանքները և հոկտեմբերի 1-ին վերագանոնալ էջմիածին:

Սեպտեմբերի 29, ուրբար: Թ. Թորամանյանը և Տարագրոսը մեկնեցին Աղջք՝ ուսումնասիրելու այնտեղի հնությունները, իսկ Գարեգին եպիսկոպոս Հովհեփյանն ու ես գնացինք նախ Փարպի՝ այնտեղի արձանագրությունները կարդալու և ապա նույնպես Աղյօթ անցնելու դիտավորությամբ:

Փարպի գյուղի հարավ-արևելյան կողմը գտնվում է Ս. Գրիգոր անունով բաղիլիկան, որի խոյակներից մեկը գտնվում է գուրսը՝ հարավային պատի մոտ, երկորորդը զարձված է վեմքար. մնացել է նաև արսիդի՝ աջ զասի կամարակալ խոյակը, որը ծեփված է, ինչպես ամբողջ եկեղեցին: Արսիդն այժմ քառակողն է, արդյո՞ք հնում էլ այդպիս է եղել. գժվար է որոշել, որովհետեւ նորոգված է. Հյուսիսային պատին ներսից մնացել է որմահեց այսն վերին գլուխը: Կեմքարի տեղ գործածված խոյակի երեսին կա մի հավասարակող խաչ՝ առնված պասկի մեջ: Մյուս երեք կողմերը պատի մեջ են եղել: Խոյակի բարձրությունը՝ 0,54 մ. է, լայնությունը՝ 0,70 մ. և խորությունը՝ 0,70 մ.. զրոի խոյակի բարձրությունը՝ 0,50 մ. է, լայնությունը՝ 0,90 մ. և խորությունը՝ 0,70 մ.:

Եկեղեցու դռան վերևի (սուր կամարաձև) բարի արձանագրությունը. (բարձրությունը՝ 0,74 մ., լայնությունը՝ ներկում՝ 1,30 մ., տառերը՝ 8 սմ.):

1 Յան

2 ուն Հայտ ամենակալի [ն] (վերջին տառը կոտրված է)

3 կամաւ Ուղոս Միածնի և միջնորդու

4 թթ Սբ Հոգույն և Աղքա (?) ուղի իւ

5 անէի ուղոս մեծի Շահնշահի և Աղքու

6 լու բոդի զՓարապ ալգեց . . . (մի անընթեռնելի բառ) և արարի

7 յիշատակ ազգէ յազգ արդ մի ու ի մերց

Շարունակությունը կողքի պատին, որի՞ բարի վրա.

8 կամ յատարազ խափանել կամի և ու խափանել Յժմ հայրապետաց

9 [ն] զոված և յամէն ազգէ

10 [ն] ալար ՉՇԴ թվիս<sup>5</sup>

9-րդ և 10-րդ տողերի փակագծի մեջ առած ուն տառերի ծայրերը կոտրված են՝ քարը պատի մեջ հարմարեցնելու ժամանակ:

Ս. Գրիգորի ճանապարհին կան ժայռի վրա փորագրված բազմաթիվ խաչեր, ոչ ուշ քան ԺԲ դարից:

Միրանավորի վրա փորագրված է հետեւյալ արձանագրությունը (բարձրությունը՝ 0,32 մ., լայնությունը՝ 1,12 մ., տառերը՝ 4,5 սմ.).

1 ի բուփի ՈԽ և յա Զաքարիա ամ

2 իր սպասալար Հայոց և Վեաց

3 ալգենութեամբն Քի առի զաշխարհս

4 ի տանկաց և ազատ արարի

5 (Կղծված բառ) յամենայն հարկէ ով խափանէ . . . (Կղծված բառ)

6 . . . զովել եղիցի ի թվիս . . . ահինշահ որդ

7 . . . անխափան մինչ ի զայուստն Քի . Թ. աւր պատարազ լինի Զա . . .

Արձանագրության շարունակությունը եղծված է և բոլորովին չի կարգացվում:

Նույնի հյուսիսային պատի լուսամուտի վերեւում կա մի արձանագրություն, որը շատ բարձր և մաշված, այլև մամուակալած լինելով չի կարգացվում:

Եկեղեցու պատու դրսից հաստացված է նոր պատով; Եկեղեցու պատի հաստությունն է 0,89 մ., նոր պատինը՝ 1,35 մ.:

Երեսում է եկեղեցու արևմտյան դուռը իր ճակատաբարով, որի վրա փորագրված է

5 Հմմտ. Շահնշարունաց («Ստորագրութիւն...», թ. էջ 76. նա թվականը կարդացել է ԶԺԴ (1264), Տե՛ս նաև Հ. Պ. Ալիշան, «Այրարատ», Վենետիկ, 1892, էջ 159, որը նույնական թվականը կարգում է ԶԺԴ, Ե-րդ տողի մեր նշանակած անընթեանելի բառը Ալիշանը կարդացել է «շարիֆաթն»։ 8-րդ տողը նրա «կարէ»]-ի փոխարեն մենք կարդացել ենք «կամի»։

և նդավոր մեծ հավասարակող խաչ՝ պսակի մեջ առնված զիգզագ գծերով, Մնում է արսիդի կամարն, որի վրա մի հավասարակող խաչ, միջին տարածությունը նշանակութիւնով առնելով, պսակաղարդը զիգզագ գծերով,

Կառուրի վրա երեսում են կամարի հետքերը հյուսիսային և հարավային կողմերից երեսում է նաև բոլորակ արսիդի աղեղութեալ չորս կողմից պատր հետագայում հաստացված է և վերածված ամրոցի: Տեղացիների ասելով ներքեւում անցը կա գեպի Շաղվերտ գետակը:

Արևմտյան պատի վրա կա զույգ պայտաձև լուսամուտ, երկուսի միջև քառանկյունի սյուն խոյակով: Երկու պիլաստրների միջին տարածությունը շատ նեղ է 2,62 մ.։

Նույն օրը, սեպտեմբերի 29-ին, Աղքեց վերադարձան Թ. Թորամանյանը և Տարագրուսը և Հայտնեցին իրենց այդ օրվա աշխատանքի արդյունքը: Այստեղ արձանագրում ենք Թ. Թորամանյանի համառոտ զեկուցը: Աղյօթում եղել է մի մեծ բազիկիկա, որի հարավային և արևելյան պատերը մնացել են մի մետր բարձրությամբ սրբատաշ խոշոր քարերով, որի մեջ նկատվում են երկու հատ որմասյան խարիսխներ՝ և դարի հատուկ բանդակագրությամբ: Տաճարի արևմտյան մասը տեղացի բնակիչները փշացրել են, իսկ արևելյան մասի վրա նոր պատ են շինել և դարձրել են դարմանոց:

Սույն տաճարին անմիջապես կից, 5—6 մետր հեռավորության վրա, կա ստորերկրյա մի իշխանական դամբարան երկու բաժանմունքով նախագավիթ և բուն դամբարան: Եենքը ամբողջովին կառուցված է սրբատաշ բարերով, հաստատում պայտաձև կամարներով:

Հյուսիսային և հարավային պատերի մեջ շինված են գերեզմաններ, որոնց առջև դրված են 0,95 մ. և 0,75 մ. բարձրությամբ բարելսեֆներ, որոնց վրա քանդակված են զանազան որսորդական տեսարաններ, կենդանիներ, թռչուններ, շներ, մարդիկ և գաղաններ, նաև խաղողի բարունակներ: Բացի այդ, կան նաև բոլորովին արխակի օրնամեններ: Հատակն ամբողջովին սալարկված է<sup>6</sup>:

Ամբողջ դամբարանը և ներսի իրերը մանրամասն շափագրված են. շափագրությունները գտնվում են Թ. Թորամանյանի մոտ:

<sup>6</sup> Այս փոքրիկ շինության մասին Շահնշարունաց, «Ստորագրութիւն...», թ. էջ 66—67, Տե՛ս նաև Հ. Պ. Ալիշանի նկարագրությունը, «Այրարատ», էջ 147 և 148: Նույն նկարագրությունը Ալիշանից առնելով տալիս է նաև Հ. Պ. Ալիշանի պատկերը, «Պատկերագրարդ բնաշխարհիկ բառարան», Վենետիկ, 1900, էջ 111.

Զեռքով գծագրել քանդակագործությունների պատկերներն անկարելի էր, որովհետև տեղը սաստիկ մութ է և խոնավ (սաղցատան վերածված լինելու պատճառով), իսկ լուսանկարել նույնպես անկարելի էր նեղ և մութ լինելու և համապատասխան գործիք ու ներսը լուսավորելու նյութեր չունենալու պատճառով։ Էստամպաժներ հանել այցըմ նմանապես անկարելի էր, նախ, որ մեծ մասամբ ծածկված են կարծրացած կրանյութով, որ հարկավոր է մաքրել, պահանջում է երկար ժամանակ և մեծ քանակությամբ սպիրտ։ Թացի այդ, այդ քանակությամբ էստամպաժ հանելու համար տեղի խոնավովթյան պատճառով պահանջում է առնվազն մի շաբաթ ժամանակ։

Դամբարանի մեջ կա Ե-է դարերին պատկանող գերեզմանական մի կողով, որի շորս կողմը զարդարված է գեղեցիկ քանդակներով։

Դամբարանն արկելյան կողմից ունեցել է քառակուսի մի աբսիդ, որը կիսաբոլորակ աբսիդի վերածելու համար հետագայում նրան ավելացրել են մի կիսաբոլորակ մաս։

Ծուրչը ընկած քարերից երևում է, որ Աղցբը ժամանակին եղել է ուրարտական ամրոց։

Սեպտեմբերի 30, շաբաթ։ Առավոտյան ժամը 9-ին դուրս եկանք Բյուրականից։ Թ. Թորամանյանը և Տարագրոսը սայլի հետ զնացին դեպի Ագարակ, իսկ ես ու Դարեգին Հովսեփյանը անցանք նախ Աղցբ տեսնելու հոչակավոր ժամբարանը, որը հիացմունքով դիտելուց հետո միացանք մեր ընկերներին Ագարակում։

Ագարակի վկայարան-եկեղեցին ունի մի արձանագրություն, որը մեծ մասամբ եղծված է և չի կարդացվում։ Կարդացվում է միայն թվականը՝ ԶԿԻ (1215)։

Ագարակից միասին անցանք՝ Ղղթամիր (այժմ Ոսկեվազ) և դիտեցինք գյուղի եկեղեցին։ Բոլոր նշաններից երևում է, որ պետք է եղած լինի հին բաղիլիկա, կան է դարից առաջ եղած պատի մնացորդներ, սակայն այլ հայլ ժամանակներում նորոգվել է և նախկին կերպարանքը գրեթե անհետացել։

Նույն օրը ճաշից հետո անցանք դիտելու Ղղթամիրի մոտ կառուցված ուրարտական բերդը։ Պարսպի մասերը մնացել են հարավ-

արևմուտքից մինչև Հյուսիս-արևելք, մյուս կողմը Քասախի ձորն է։ Դուռը նկատվում է Հյուսիսային կողմից որպես մի անցք, որի արեւելյան կողմը մնացել է քառանկյունի վիթխարի քարերով կառուցված բուրգը։ Քարերի վրա կան մետաղի հետքեր միայն բուրգի վրա, մյուսները իրար վրա շարված են բնական վիճակում։ Գետեղերքի կողմն եղած պատերը, որպես միջնաբերդի պատեր ունեն 4,5 մ. բարձրություն, իսկ երկրորդական պատերը՝ 2—2,5 մ.։ Կան նաև գերեզմանաբարեր։ Ցոլոր հետքերից երևում է, որ բրիստոնեական դարերում էլ կյանքն այստեղ գրեթե անընդհատ շարունակվել է։ Գետեղերքից արևելք երևում են հաստ, կրաշաղախ սրբատաշ պատերի բազմաթիվ մնացորդներ, որոնք ապացուցում են, որ այս տեղը եղել է մեծ բազմություն պարունակող մի վայր կամ բաղաքատեղ։ Դրան ապացուց է նաև բաղիլիկ եկեղեցին Բենիամին Բաղալյանի այգու մեջ։ Այդ բաղիլիկ եկեղեցու բեկորների մնացորդները ցույց են տալիս, որ այն պատկանում է, ամենայն հավանականությամբ, Եղարին, եղել է վկայարան մի պիլատրով։ Դուրսն ընկած երևում են շորս խոյակներ՝ Եղարին հատուկ քանդակներով։ Նույն ժամանակ տաշում առաջանալու մունքների մասին հատուկ տաշումներու մեջ կարիք է կատարել առաջանական գործություն։ Կողմից կոտրված մի գերեզմանական կոթող, չորս կողմը սյան ձևով քանդակված, իսկ մեծանուր վերեկ մինչև ներքե թերե թել ժապավեն, մեկ կողմը՝ շորս թել ժապավեն։ Լայնությունն է 0,50 մ., խորությունը՝ 0,60 մ.։ Խոյակների մեծությունն է ճակատը՝ 0,90 մ., խորությունը՝ 0,75 մ.։ Նման խոյակներ կան Տեղորում, երերույքում, Շիրվանջուղում և այլուր։

Հոկտեմբերի 1, Կիրակի։ Առավոտյան վաղ, ժամը 7-ին, գնացինք Փաթրինչ գյուղը, դիտեցինք փոքրիկ ամրոցը, լուսանկարեցինք և վերագրածնք Ղղթամիր։ Հիշված ամրոցը Զաքարյանց վերջին շրջանի շենք է, ժողովարի երկրորդ կեսից։ Պատի վերին երեք շարքը Հյուսիսային կողմից նորոգված է։

Վերջացած համարելով գիտարշավի սկզբում նախագծված ինդիքների ուսումնասիրությունը, Օշականի վրայով վերագրածնք էջմիածին, ուր հասանք ճաշից հետո ժամը 5-ին։

